

մաշտոցապատումի ազդեցության տակ, որով գրերի գյուտն անբաժան է դիտվում միջագետքյան գործուղումից: Մինչդեռ Ղազար Փարպեցին ունի սեփական տեսակետը գրերի գյուտի հարցում, որն էլ լիովին, թեկուզ փոքր-ինչ խրթին և աղավաղ ոճով, ներկայացրել է իր Պատմության I դրվագում:

Ահա, ըստ Ղազար Փարպեցու մաշտոցապատումի, Հացեկաց գյուղի Վարդանի որդի, արքունի զինվոր ու դպիր, ապա՝ ճգնավոր Մաշտոցը, որ մեծ հեղինակություն էր վայելում հասարակության և վանական-անապատական շրջաններում, շատ էր մտահոգված հայերեն գրավոր գործունեություն չլինելու պատճառով, մանավանդ, որ կան հայերեն նշանագրեր:

Բանից պարզվում է, որ այդ նշանագրերի գոյության մասին մեկը եկեղեցում հայտնել է Վռամշապուհ արքային, թե ինքը դրանք տեսել է մի գյուղում ոմն եպիսկոպոսի մոտ: Վռամշապուհը անտարբեր է մնացել այդ լուրի նկատմամբ, բայց այդ մասին հայտնել է հայոց կաթողիկոս Սահակ Պարթևին, որը նույնպես անտարբեր է ընդունել լուրը: Սակայն, հենց որ Մաշտոցի հետ զրույց է բացվում հայերեն գրերի մասին, վերջինիս հայտնում է Վռամշապուհից օրեր առաջ լսած տեղեկությունը: Ուստի մտնում են թագավորի մոտ, որը ևս պնդում է իր լսածը. «*Եւ նոցա լուեալ զայս ի թագաւորէն, փութացուցանէին զնա՝ ասելով, թե ճեպեա յաղագս մեծ և օգտաբեր աշխարհիս Հայոց գիւտիս այտորիկ ի ժամանակս քոյ, որ շատ ավելի առ յապայսն բերէ քեզ շահ, յիշատակ անմոռաց եւ օգուտ երկնաւոր վայելից, քան զիշխանութիւն թագաւորութեանդ քո, եւ կամ որպէս յառաջ քան զքեզ նախնիքն քո էին յագգէն Արշակունեաց*» ([4], էջ 32):

Թագավորի փառասիրությունը շոյելով՝ «*վաղվաղակի ստիպով*» Վահրիճ իշխանին դեսպան են ուղարկում լուրը հայտնած երանելի Հաբել երեցի մոտ, վերջինս էլ իր հերթին «*փութանակի*» հասնում է իր մերձավոր, բարեպաշտ (ո՛չ եղեսացի, ո՛չ ասորի – *Ա.Ս.*), սքանչելի եպիսկոպոս Դանիելի մոտ, որից առնելով նշանագրերը՝ բերում է արքունիք:

Ղազար Փարպեցին, որ գրերը բերել տալու հատվածը միայն շարադրում է ըստ Կորյունի՝ համապատասխան վերոնշյալ սրբագրումներով, գրեթե Կորյունի բառերով ավելացնում է. «Իսկ արքայն Հայոց, սուրբ կաթողիկոսան էւ երանելեան Մաշտոցիւ, ընկալեալ զնշանագիրսն ի Հաբելէ, ուրախ լինէին» (էջ 32):

Սրանով Ղազար պատմիչը ավարտում է հայերեն նշանագրերը գտնելու պատմությունը և, շարունակելով, ներկայացնում է այդ նշանագրերի հիման վրա այբուբեն կարգելու և կիրարկման մեջ դնելու գործը, որը Մաշտոցը հաջողությամբ կատարում է, որովհետև նրան

«մասնագիտորեն» օգնում է կաթողիկոս Սահակ Պարթևը, ինչպես սկզբից, առաջին գրույցից և ետ, խոստացել էր:

Քայց պարզվում է, որ հայերեն այբուբենը ոչինչ չարժե, եթե դա չներդրվի դպրոցներում, իսկ դպրոցում չի կարող ներդրվել, մինչև հայերեն չթարգմանվի ս.Գիրքը: Իսկ ամենակարևոր և դժվար այդ գործը կարող է անել միմիայն Սահակ Պարթևը, որին էլ դիմում են ազգովի, խնդրելով, որ նա ստանձնի այդ գործը, որ մեծությամբ հիշեցնում է նրա նախապապի՝ Գրիգոր Լուսավորչի սխրանքը, «որ յանգիտութենէ ի ճշմարիտ աստուածգիտութիւն առաջնորդեաց աշխարհիս Հայոց» (էջ 38): Ահա նույնպիսի փառքով է պսակվում նաև Սահակը:

Ո՞րն է ուրեմն գրերի ստեղծման մեջ Մաշտոցի դերն ըստ Ղազարի. հայերեն դպրոցային հարցով մտատանջվե՞լը, կաթողիկոսին ու թագավորին գրի հարցում շտապեցնե՞լը, թե՞ Դանիելի մոտ պահպանված նշանագրերը կարգի բերելը Սահակի օգնությամբ և դպրոցներ հիմնելը:

Փաստորեն ստացվում է, որ նշանագրերը չեն հորինվել, այլ ձեռք են բերվել, և դա Ղազարի պատմության մեջ արտահայտվել է մի քանի անգամ:

1. Յույց տալով, որ Մաշտոցը մտահոգ ու տրտում էր հայերեն դպրոցյուն չունենալու պատճառով, Փարպեցին գրում է. «Զայս ի բագում ժամանակաց զմտաւ ածեալ երանելի առն Մաշտոցի և փղձկացեալ յանձն յուր, մանաւանդ թէ գոն նշանագիրք հայերէն լեզուոյս, որով հնար է ինքեան ձայնիւ, և ոչ մուրացածոյ բարբառով, շահել զոգիս արանց եւ կանանց առ հասարակ յամենայն եկեղեցիս բազմութեանն» (էջ 30):

Թե որտեղից է լսել Մաշտոցը նշանագրերի գոյության մասին մինչև Սահակից իմանալը, Ղազարը չի ասում:

2. Հաբել երեցի միջոցով նշանագրերը Մաշտոցին հասցնելուց հետո Ղազարը գրում է (այս տեղում բանասերների կարծիքով բնագիրը պակասավոր է, և XVIII դարում ձեռագրի գրիչը այն լրացրել է Խորենացու Պատմության մեջ եղած մաշտոցապատումից ([4], թ.11-12)). «Եւ այսպէս դիպեալ գիւտի նշանագրացն՝ ձեռն ի գործ արկանէր երանելին Մաշտոց...» (էջ 34), որ պետք է հասկանալ, թէ պատահելով նշանագրերի գոյտին՝ Մաշտոցը գործի անցավ:

Այնուհետև բնագիրն աղավաղվել է («յերիւրելով զնա սուրբ հայրապետին Հայոց Սահակայ...»), ուստի կարելի է առաջարկել ավելի ճիշտ ընթերցման տարբերակ. «...յերիւրելով զնա հեգենային ուղղաձայնութեան՝ ստեպ հարցմամբ ուսանելով ի սուրբ կաթողիկոսէն Սահակայ զաթութայիցն զաղափար՝ ըստ անսայթաքութեան յունին: [Իսկ] սուրբ հայրապետին Սահակայ դիրահնար ճանապարհ ցուցանելով

կարգադրութեան գրենոյս և տալով նմա օգնականս և այլ այրս բանի-
բունս և մտացիս ի քահանայիցն Հայոց, որք էին առ սակավ մի, որպէս
երանելին Մաշտոց, մերձաւորեալք ի յունարէն հեզենայինսն (իսկ լավ
իմացողը Սահակն է՝ ըստ Ղազարի – Ա.Ս.), որում առաջնոյն անունն
էր Յոհան ի գաւառէն Եկեղեաց, և երկրորդին՝ Յովսէփ ի Պաղանական
տանէն, և երրորդին՝ Տէր ի Խորձենոյ, և չորրորդին՝ Մուշէ ի Տարօնոյ,
որոց օգնելովն զօրէր երանելի Մաշտոց, հանդպեցուցանէր զհայերէն
աթոյթայսն ըստ կարգման սիլովբայիցն Յունաց: Վասն զի ոչ լինէին
բաւական ի վճարել անսխալ ուղղակի առանց առաջնորդելոյ նոցա
սրբոյ հայրապետին Սահակայ, որ յոյժ առյցեալ վարժիւք անցանէր
զբազում գիտնովքն Յունաց...» (էջ 34-36): Այսպիսով, Մաշտոցն ամեն
մի ձեռնարկում հաջողել է շնորհիվ Սահակի:

3. Դիտարկենք ևս մի վկայություն առ այն, որ Մաշտոցը նոր
նշանագրեր չի հորինել ըստ Ղազարի: Հայոց ավագ քահանա-
ները՝ Մաշտոցով, նախարարներն ու տանուտերերը՝ թագավո-
րով, ս. Գիրքը թարգմանելու խնդրանքով դիմում են կաթողիկոս
Սահակին՝ ասելով. «Մէք որ կամք առաջի քո, հանդերձ երանե-
լեան Մաշտոցի, զոր զարթոյց աստուածային շնորհ ի ցանկու-
թիւնս այս՝ կարգել զվաղնջուցն գրեալ շարագիրս (փխ. Նշանա-
գիրս՝ ըստ Մ. Աբեղյանի ուղղման – Ա.Ս.) տառիցն, զորս ոչ ու-
րուք էր հոգացեալ արկանել ի կիր, այլ ասորի մեծաջան և անօ-
գուտ ուսմամբքն աշխատեալք յոխորտ...մինչև գտաւ (գտնվեց-
Ա.Ս.) զիր և աջողելով Քրիստոսի եկեալ յաճումն տակաւին զօ-
րանայ...» (էջ 36):

Ինչպէս տեսանք, Ղազարի մաշտոցապատումի մեջ ոչ մի բնա-
գրային խզում չկա: Պարզապէս V դարի վերջում ունենք գրերի ստեղծ-
ման մի ուրույն պատմություն, որը էականորեն տարբեր է Կորյունից:
Բայց բանասերներին շփոթի է մատնել, հավանաբար, այն հարգանքի
տուրքը, որ Ղազարը հղել է Կորյունին «Պատմության» առաջին դրվա-
զի 10-րդ հատվածում. «Եւ զայս թէ կամիցի որ գիտել հաւաստեալ ի
պատմութենէ գրոց առն ցանկալի Կորեան, աշակերտի նորին երանե-
լոյն Մաշտոցի, կարդացեալ տեղեկասցի զվարս կենաց նորա, եւ զիր
հայերէն նշանագրացն, թէ ե՞րբ կամ ուր և կամ յոյր ուրուք ձեռն գտանէ՝
թագաւորին Հայոց Վռամշապիոյ ջերմեռանդն խնդրելով. զոր կարգեաց
գրելով ճշմարտապէս յառաջադրեալ այրն հոգևոր Կորիւն, ուստի եւ
մեր բազում անգամ կարդալով տեղեկացեալ հավաստեալ» (էջ 30):

Իրականում, Ղազարն ամեն բան ճիշտ է ասել. թե ուզում ես տե-
ղեկանալ Մաշտոցի կյանքին, թե երբ, որտեղ կամ ում ձեռքով է գտնվել
հայոց գիրը Վռամշապուհի խնդրանքով, կարդա՛ Կորյուն: Ղազարի
նկարագրածից բոլորովին պարզ է, որ Մաշտոցը հայերէն գրեր չի
ստեղծել: Կարծես Ղազարը բազում անգամ կարդացել է միայն Կորյու-

նի սկզբնամասը: Ղազարի կարծիքով Մաշտոցի հետագա գործը վերաբերում է միայն Դանիելյան նշանագրերի կարգավորմանը և կիրարկմանը: Այնուամենայնիվ, տարօրինակ չէ, որ այսքանից հետո Ղազարը մի փոքրիկ հատված՝ Վահրիճի առաքելությունը և Դանիելյան գրերի ձեռքբերումը, գրեթե բառացի քաղագրել է Կորյունի բնագրից, որովհետև նրանով նա հավաստել է Կորյունի արժեքը:

Այլ բան է, որ բնագրային մանր առնչություններ են դիտարկվում Խորենացու և Փարպեցու մաշտոցապատումների միջև: Որտեղի՞ց դրանք, եթե Խորենացու «Պատմության» մեջ մաշտոցապատումը հետագա (VII-VIII դդ.) խմբագրության արդյունք է, որի համար աղբյուր են ծառայել Կորյունի «Վարքը» և Ղազարի «Պատմությունը»: Մյուս կողմից, ինչպես տեսանք, Ղազարի առաջին դրվագի գլխավոր աղբյուրը եղել է Խորենացու «Պատմությունը» (տե՛ս [6], էջ 51-91, նաև [1], էջ 354-358): Այսինքն, բուն Խորենացու «Պատմությունը» աղբյուր է եղել Ղազարի համար, իսկ Ղազարի «Պատմությունը» աղբյուր է եղել Խորենացու «Պատմության» ընդմիջարկող-խմբագրի համար: Մեջբերենք երկու բնագրային տեղիները:

Մ. Խորենացի. *«Փոխատրելով զհայերէն այթութայսն ըստ անսայթարութեան սիւղարայից Հելլենացւոց»* (Գ.53):

Ղ. Փարպեցի. *«Հանդիպեցուցանէր զհայերէն այթութայսն ըստ կարգման սիւղարայիցն Յունաց, ստէպ հարցմամբ եւ ուսանելով ի սուրբ կաթողիկոսէն Սահակայ զայթութայիցն զաղափար, ըստ անսայթարութեան Յունին»* (էջ 34):

Մ. Խորենացի. *«...կարգեալ ըստ ձևոյ օրինակի յունականին զվաղնջուցն գրեալ շարագիր տառից»* (Գ.52):

Ղ. Փարպեցի. *«...կարգել զվաղնջուցն գրեալ շարագիրս [փխ. Նշանագիրս] տառիցն, գորս ոչ ուրուք էր հոգացեալ արկանել ի կիր»* (էջ 36):

Բնագրային համատեքստից ակներև է, որ երկու գույգ մեջբերումների դեպքում էլ Ղազար Փարպեցու տողերը հնչում են ավելի բնական ու հարազատ, իսկ Խորենացուն վերագրված տողերը մի տեսակ արհեստական են՝ հարմարեցված պատմահոր ոճին:

Բայց կա ևս մի անուղղակի բնագրային առնչություն, որ չի նկատվել, բայց շատ խոստուն է: Արդեն նշել ենք, որ Խորենացու «Պատմության» ընդմիջարկող-խմբագիրը V դարի սկզբների՝ առաջին երկու տասնամյակի համար պարսից արքա է ճանաչում Վռամին՝ Հազկերտի փոխարեն (Մ.Խորենացի, III, 52): Նույն սխալը տեսնում ենք Ղազարի մոտ, բայց արդեն ոչ պատահական, որովհետև Ղազարը կարծել է, որ այդ ժամանակ դեռ շարունակում էր իշխել Շապուհը, իսկ Շապուհին իրականում հաջորդել է Վռամը (էջ 40): Այնպես որ, Վռամը պար-

սիկ թագավոր է, մի դեպքում՝ սխալ իմացությամբ, մյուս դեպքում՝ սխալ համոզմունքի պատճառով:

Կարելի է արդյոք կարծել, Մանուկ Աբեղյանի կասկածը փոխարկելով (հմմտ.[1], էջ 357), որ Փարպեցու «Պատմության» հետագա խմբագիրը օգտագործել է Խորենացու «Պատմության» խմբագրի ներմուծած մաշտոցապատումը:

Ո՛չ, որովհետև երկու բնագրերի նմանության հիմքը կազմող երկու փոքրիկ տեղեկությունները հատուկ են միմիայն Ղազար Փարպեցու մաշտոցապատումի հայեցակարգին, ըստ որի՝ Մաշտոցը ոչ թե գրերի ստեղծողը, այլ դրանց կարգավորողն է: Պատահական չէ, որ Մաշտոցի այդ նոր ֆունկցիան առաջ է բերել երկու առանցքային եզրաբառտերմիններ՝ հեզենա, աթութա, ի հավելումն Կորյունի սիլովբա-կապի: Այս տեսակետից նայելու դեպքում բնագրային առնչությունների խնդիրը լուծվում է հօգուտ Փարպեցու: Բացի այդ:

Եթե Ղազար Փարպեցին ձեռքի տակ ունենար Խորենացուն վերագրված մաշտոցապատումը, երևի չէր բավարարվի այդ երկու չնչին «քաղազրությամբ», բայց և միևնույնն է, կմնար իր տեսակետին հավատարիմ այնպես, ինչպես քաղաքական պատմության հարցում է մնացել, երբ նա Մեծ Հայքի պատմությունը՝ բաժանումից մինչև թագավորության անկում, շարադրել է՝ քայլ առ քայլ քաղազրելով պատմահոր բնագրից առանց նրա անունը տալու: Դա լավ երևում է թեկուզ հենց նրանից, որ Ղազարը, ի տարբերություն Խորենացու, լռության է մատնում պարսից արքունիքի և Սահակ Պարթևի հատուկ հարաբերությունները և, հատկապես, Սահակի միջնորդությամբ իր փեսա Համազասպ Մամիկոնյանին հայոց սպարապետ կարգելը և այլն: Արդեն պարզ է, որ Ղազարը, ծրագրային համոզմունք կամ տեսակետ ունենալու դեպքում, եթե դա տարբեր է Խորենացուց, ասենք պատմական որևէ փաստի վերաբերմամբ, հետևում է իր իմացածին: Դրա լավագույն վկայությունն է այն, որ Մեծ Հայքի բաժանումից հետո Արևելյան Հայաստանում իշխող թագավորների փարպեցիական շարքը (Խոսրով-Վռամշապուհ-Խոսրով-Շապուհ-Արտաշես) Խորենացու հետ նույնական է, բայց ահա պարսից թագավորների շարքը տարբերվում է Խորենացու շարքից:

Մ. Խորենացի. Շապուհ – Արտաշիր – Վռամ – Հազկերտ – Վռամ – Հազկերտ:

Ղ. Փարպեցի. Շապուհ – Վռամ – Հազկերտ – Վռամ – Հազկերտ: Խորենացու մոտ Արտաշիրն ավելորդ է. դա գալիս է նրանից, որ Խորենացին Շապուհ անվան տակ տեսել է պարսից երկարակյաց արքային, որը սխալ է, իսկ Ղազարը գիտի իրական Շապուհ III-ին, որի օրոք Մեծ Հայքը բաժանվեց: Չնայած դրան՝ Ղազարն էլ իր հերթին սխալվել է նրանց կառավարման ժամանակների հարցում: Բայց ամենակոպիտ

սխալն այն է, որ Ղազարը հայոց Վոամշապուհ արքային ավելի շուտ է մեռցնում, քան նրան նշանակող պարսից Շապուհին, այն դեպքում, երբ իրական Վոամշապուհը կառավարել է նաև Շապուհի որդի Վոամի և սրա հաջորդի՝ Վոամի եղբայր Հազկերտի օրոք: Դեռ ավելին, Մաշտոցն իր կյանքի անապատական շրջանն ավարտում է, որին էլ հաջորդելու է գրերի գյուտը, Վոամշապուհի հինգերորդ տարում, երբ իրականում այդ տարում Մաշտոցը նոր է դառնում կրոնավոր (մոտ 396 թ.): Իհարկե, կրոնավորության սկիզբն ու վերջը շփոթելու պատճառը պետք է փնտրել Կորյունի նշած Դանիելյան գրերի ստացման թվականի աղճատման մեջ՝ ի հինգերորդի ամի, ինչից երևում է, որ աղճատումը եղել է դեռևս հինգերորդ դարում:

Ինչո՞վ բացատրել Կորյունի գրչի թույլ տված տասը տարվա սխալը. որ տասնհինգի փոխարեն հի՞նգ է գրել, կամ տասնվեցի փոխարեն՝ վեց: Բայց այդ սխալը շատ բարեպատեհ էր Ղազարի համար, այլապես՝ գրերի գյուտի պատմական տարում, Վոամշապուհը վաղուց պիտի մեռած լիներ ըստ Ղազարի: Մյուս կողմից, Ղազար Փարպեցին ճիշտ գիտի Մահակի և Մաշտոցի ժամանակ իշխած արքաներին՝ երկու Վոամ, երկու Հազկերտ, որոնց հետ համաձայն է Կորյունը, որին և հղում է Ղազարը երկրորդ անգամ՝ նույնքան հարգանքով: Ուրեմն ինչո՞ւ է շեղվում Կորյունից՝ գրերի գյուտը դնելով IV դարում: Երևի Ղազարի պատմագրական ծրագրով նախատեսված էր Վոամշապուհ արքայի վաղ կառավարումը...

Ամենայն հավանականությամբ, ելնելով Ղազարի մաշտոցապատումի բուն ծրագրից ու հայեցակարգից, պետք է ասել, որ նրան այդ պատմական-ժամանակագրական տվյալները չեն հուզել, նրա համար գլխավորը եղել է Մաշտոցի, Մահակի և Վոամշապուհի դերերի վերագնահատումը, ինչին և հասել է: Ուստի նրան բավարարել է Վոամշապուհին միայն Շապուհի օրոք դնելը, գյուտի վաղ ժամանակը, որովհետև այդ ամեն անաքրոնիզմները լուծվում, անհետանում են Մահակին ու Մաշտոցին հատկացված անորոշ երկար կյանքի ժամանակաշրջանում՝ մինչև Հազկերտ II, և չեն հարուցում որևէ հակասություն իր «Պատմության» առաջին դրվագի բնագրում: Այնպես որ, երանելի Կորյունը թող իր տեղում մնա, Խորենացին՝ իր տեղում, առանց հիշատակման, պատմագրական սկզբունքն էլ իր տեղում. չեղածները չավելացնել, եղածները չնվազեցնել (էջ 16):

Ահա Ղազար Փարպեցին՝ ըստ առաջին դրվագի. այր պատմագիր, «դիվանագետ», որ կարող է մտածել մի բան, ասել ուրիշ բան և անել մի այլ բան, ինչպես տեսանք Կորյունի և նրա հերոսների հանդեպ ունեցած վերաբերմունքի հարցում;

Այսպիսով, վստահորեն կարելի է արձանագրել.

1. Ղազար Փարպեցու «Պատմության» պատվերի մեջ արդեն ծրագրված էր Սահակ Պարթևի հերոսացումը:

2. Սահակի հերոսացումը կատարվել է Գրիգոր Լուսավորչի մեծության հետ նրա հավասարեցման և Մաշտոցի գործի «նսեմացման» ուղիով:

3. Փարպեցու մաշտոցապատումի բնագիրը պակասավոր չէ և իր հերթին վկայում է, որ Խորենացու «Պատմության» մեջ սկզբնապես մաշտոցապատում չի եղել:

4. Ղազարի մաշտոցապատումից օգտվել է Խորենացու «Պատմության» խմբագիրը VII-VIII դդ. սահմանում:

5. Ըստ Ղազար Փարպեցու «Պատմության» մաշտոցապատումի՝ Մաշտոցը ոչ թե գիր է ստեղծել, այլ դանիելյան նշանագրերը կարգավորել է:

Մատենադարան

Ա. Ա. Սահակյան

Մաշտոցապատումը Ղազար Փարպեցու «Հայոց պատմության» մեջ

Հինգերորդ դարի պատմիչ Ղազար Փարպեցին իր «Հայոց պատմության» առաջին դրվագում վարքագիր Կորյունին դրվատելով հանդերձ՝ շարադրում է «մաշտոցապատումի» նոր տարբերակ, որի բնագիրը, հակառակ բանասիրության մեջ ընդունված կարծիքին, մեզ է հասել անթերի:

А. А. Саакян

Рассказ о Маштоце в «Истории Армении» Лазаря Парпетци

Историограф V в. Лазарь Парпетци в первой части своей «Истории Армении», восхваляя «Житие Маштоца» Корюна, тем не менее изложил новую версию приобретения алфавита, целостный текст которой дошел до нас без потерь вопреки принятому в армянской филологии противоположному мнению.

A. A. Sahakyan

The Mashtots Story in Lazar Parpetsi's "History of Armenia"

Though the 5th century historiographer Lazar Parpetsi praises hagiographer Koryun in the first chapter of his "History of Armenia", he still introduces a new version of the "Mashtots story", the original version of which, against the views accepted in philology, has reached us in a perfect condition.

Գրականություն

1. Աբեղյան Մ., *Երկեր, հ. Գ, Երևան, 1968:*
2. Ղազար Փարպեցույ Պատմութիւն և թուղթ, *Տփղիս, 1904, «Յառաջարան», Զ-Է*
3. Ղազար Փարպեցի, *Հայոց Պատմություն, Թուղթ Վահան Մամիկոնյանին, աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները Բագրատ Ուլուրաբյանի, Երևան, 1982:*
4. Տեր Մկրտչյան Գ., *«Արարատ», 1901:*
5. Մարտիրոսյան Արտ., *Մաշտոց, Երևան, 1982:*
6. Խալաթեան Գր., *Ղազար Փարպեցի և գործք նորին, պատմական և գրական քննութիւն, Մոսկուա, 1883:*